

Միփիայ 6:8 (Micah 6:8)

«Խոնարհորէն Քալել Աստուծոյ Հետ »

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 06.20.99

Այս առաւօտ սերտեմք համար մը - Միփիայ 6:8: *«Քեզի յայտնեց, ո՛վ մարդ, թէ ի՛նչ է աղէկը, ու Տէրը քեզմէ ի՛նչ կը պահանջէ, բայց միայն իրաւունք ընել ողորմութիւն սիրել ու խոնարհութիւնով փոխ Աստուծոյդ հետ փալել:»* Այս համարը կը ցուցնէ թէ Աստուած ինչ կակնկալէ Աստուածավախ մարդոցմէ եւ Աստուածավախ հայրերէ:

Առաջին – Աստուածավախ մարդը իրաւարար է:

Այս օրերուս կը տեսնենք թէ շիտակը եւ սխալը իրարմէ շատ տարբեր չեն: Մարդիք կը խորհին թէ կրնան ընել ինչ որ կուզեն մինչեւ այն ատեն որ չեն բռնուիր: Հոք չեն ըներ թէ ինչպէս կը վարուին ուրիշներու հետ - կարելորդ այն է թէ ուրիշներ ինչպէս իրենց հետ կը վարուին:

Յիսուս ըսաւ *«Քու Տէր Աստուածդ սիրել փոքր սրտովդ եւ փոքր սրտովդ ու փոքր սրտովդ եւ փոքր սրտովդ սիրես փոքր սրտովդ պէս»* Մատթէոս 22:28,29:

Անոնք որ զԱստուած կը մանչնան, գիտեն տարբերութիւնը շիտակ եւ սխալին մէջ եւ ստայնըմ կը շարժին երբ կը հարաբերին Աստուծոյ եւ ուրիշներու հետ: Աստուածավախ մարդը թէ իրեններուն եւ թէ ուրիշներուն իրաւունքը կը պաշտպանէ:

Երկրորդ – Աստուածավախ մարդը ողորմութիւնը կը սիրէ, գթասէր է:

Բոլորս կը մեղանչենք: Մեղքի մէջ ծնած ենք եւ մեղքը մեզ Աստուծմէ կը գատէ - յաւիտեան: Չենք կրնար դադրիլ մեղանչելէ եւ չենք կրնար Աստուծոյ մօտենալ այս կերպով: Աստուած ողորմած է եւ կը գթայ մեր վրայ :

Պողոս Առաքեալ կըսէ - Եփեսացիս 2:4,5 *«Բայց Աստուած, որ մեծ է ողորմութիւնով, իր առատ սիրովը, որով մեզ սիրեց, երբ յանցանքներու մէջ մեռած էինք, մեզ Քրիստոսին հետ կենդանացուց»:*

Աստուած մեզ կը փրկէ մեղքէ եւ ուրեմն չպատժեր յաւիտեան: Մեր վրայ կը գթայ երբ մենք անկարող ենք - ահա իսկական ողորմութիւն: Աստուածավախ մարդն ալ ողորմած է ու կը գթայ ուրիշներուն վրայ:

Երբ որդ - Միջիայ կըսէ թէ Աստուածավախ մարդը խոնարհութիւնով Աստուծոյ հետ կը քալէ:

Դիւրին չէ՛ խոնարհ ըլլալ: Պէտք է մենք գմեզ լաւ նանչնանք: Խոնարհ ըլլալ Աստուծոյ առջեւ, կը նշանակէ գիտնալ թէ մենք փրկուած ենք Յիսուսի միջոցաւ, որ Աստուծոյ ողորմութիւնն է շնորհքն է եւ ոչ թէ մեր բարի գործերը եւ կամ մեր արժանի վիճակը: Ուրեմն խոնարհ ըլլալ կը նշանակէ միշտ Աստուծոյ հնազանդիլ:

Որպէս հայր մը - որպէս անձ մը - Ի՞նչպիսի օրինակ մը կուզես ըլլալ զաւակներուդ: Ի՞նչպէս կուզես որ հետեւին քեզի:

Ուշ էր, իրիկնամուտին, եւ ահա նաւուն motorը աւրուեցաւ եւ կեցաւ - կարելի չէր նորոգել զայն: Նաւը կը տատանէր բարձր ալիքներուն վրայ եւ ջուրով կը լեցուէր: Jaeger ընտանիքը լաւագոյնը կընէր ազատելու բայց կարելի չէր: Իրենց հանելի ձկնորսութեան պահը դառնած էր վախի եւ սարսափի պահերու: Խեղդուիլը անխուսափելի էր:

Նաւուն մէջ էին George Jaeger եւ իր 3 զաւակները նաեւ իր հայրը. իրենց ազատութեան բանկոնները (life jackets) ամրապնդած, չուանով իրար կապուեցան եւ ինկան ալեկոծ Atlantic ովկիանոսին մէջ:

Կը մթննար, կը չանային լողալ բայց անկարելի էր կոուիլ բարձր ալիքներուն դէմ: Մի առ մի խեղդուեցան իր զաւակները ու հայրը:

Բայց George պայքարեցաւ եւ ճը ժամ լողալէ ետք հասաւ ցամաք - չուանը դեռ իրեն կապուած էր:

George պատմեց թէ ինչպէս իւրաքանչիւրը խեղդուեցան եւ ըսաւ թէ ինք սորվեցուցած էր իր գաւակներուն որ մահէն չվախնան քանի որ մահը կը նշանակէր Յիսուսի քով երթալ: Շարունակեց ըսելով, «Clifford, էն պզտիկ տղաս ըսաւ՝ 'չեմ ուզեր ալ պայքարիլ այս ալիքներուն հետ, հապա կուզեմ Յիսուսի քով երթալ'»:

Այս կերպով George կրցաւ վկայել թէ իր այս դժուար կորուստը քարի հետեւանք ունէր, իւրաքանչիւր գաւակ քաջութեամբ մահը դիմագրաւած էր:

Աստուածավախ անձ ըլլալը կը պահանջէ երկար տարիներ Աստուծոյ հետ փախել, անոր հետեւիլ: Յիսուսի հետ մէկ ըլլալ անոր ձայնին հնազանդիլ եւ լիովին Անոր վստահիլ: